ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

« ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ -18 /02 » ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

Ք.Արտաշատ <<02>> <<օգոստոս>> 2018թ., ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մովսիսյան Վարդուհի

Անդամներ՝ Կյուրեխյան Սուսաննա

Նազարյան Արմինե

Հանձնաժողովի քարտուղար՝ Փայլակ Հակոբյան

1. **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված 1ին տեղը զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ**

Ընդունել ի գիտություն , որ *<<Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզ >> ՀՈԱԿ*-ի կարիքների համար հայտարարված « *ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ 18/02* » ծածկագրով Գնանշման հարցման ընթացակարգի 1-ից -39-րդ չափաբաժիններով <<ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ>> ՍՊԸ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Համաձայն Հայաստան Հանրապետության կառավարության 04,05,2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 43-րդ կետի 3) ենթակետի պահանջների, հարցում է կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և 02. հուլիս 2018 թվականի ժամը 11-00-ի դրությամբ չի տրամադրվել եզրակացություն , հետևաբար այն համարել դրական:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. **Առաջին տեղը զբաղեցնող մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին**

<<ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ>> ՍՊԸ -ի կողմից հրավերով սահմանված ժամկետում մինչև 02,08,2018թ ժամը 11-00-ն ներկայացրել հրավերով պահանջված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը ապրանքի ամբողջական նկարագիր):

Ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ՝

2,1.Հրավերով չափաբաժին թիվ 1 /կարագի/ տեխնիկական բնութագիրը կաթնայուղը սահմանված է ոչ պակաս քան 82.9% իսկ մասնակցի կողմից ներկայացված հրավերի հավելված 6.1 ապրանքի

տեխնիկական բնութագրով յուղայնությունը 71.5-82.5% :

2,2. Հրավերով չափաբաժին թիվ 5 /տավարի միս/ տեխնիկական բնութագիրը ոսկոր և միս հարաբերակցությունը սահմանված է 70-80% մսեղիկ իսկ մասնակցի կողմից ներկայացված հրավերի հավելված 6.1-ով ապրանքի տեխնիկական բնութագրով մսեղիքը 50% :

2,3. Հրավերով սահմանված չափաբաժին թիվ 8 /շաքարավազ/ մասնակցի կողմից ներկայացված հրավերի հավելված 6.1 ներկայացված չէ ապրանքային նշանը և արտադրողի անվանումը:

2,4. Հրավերով չափաբաժին թիվ 22 /ոսպ/ տեխնիկական բնութագիրը սահմանված է դեղին կամ կանաչ գույնի իսկ մասնակցի կողմից ներկայացված հրավերի հավելված 6.1 ապրանքի տեխնիկական բնութագրով ներկայացված է դեղին կամ կանաչ գույնի ընդ որում մասնակիցը պետք է ներկայացնի հրավերի հավելված 6.1 –ով առաջարկվող ապրանքի կոնկրետ բնութագիր:

2,5. Հրավերով սահմանված չափաբաժին թիվ 37 /եգիպտացորեն պահածոյացված/ մասնակցի կողմից ներկայացված հրավերի հավելված 6.1 –ով ներկայացված չէ ապրանքային նշանը և արտադրողի անվանումը, առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի բնութագրում առաջարկվող ապրանքը, նշված չէ ապրանքի բնութագրի կոնկրետ չափ:

2,6. Հրավերով սահմանված չափաբաժին թիվ 38 /վարունգի մարինադ/ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի բնութագրում առաջարկվող ապրանքը, նշված չէ ապրանքի բնութագրի կոնկրետ չափ:

2,7. Հրավերով սահմանված չափաբաժին թիվ 39 /քյուֆթա/ մասնակցի կողմից ներկայացված հրավերի հավելված 6.1 –ով ներկայացված չէ ապրանքային նշանը և արտադրողի անվանումը, մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի բնութագրում առաջարկվող ապրանքը, նշված չէ ապրանքի բնութագրի կոնկրետ չափ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց

1. Գնումների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 524-Ն որոշման 47 –րդ կետի համաձայն ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 03,08,2018 թվականի ժամը 16-00 -ին:

4 . Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Մասնակցում էին՝

ՀՀանձնաժողովի նախագահ՝ Մովսիսյան Վարդուհի -

Անդամներ՝ Կյուրեխյան Սուսաննա -

Նազարյան Արմինե -

Հանձնաժողովի քարտուղար՝ Փայլակ Հակոբյան